

Զոր կողբայն բարձըր բերէ բլրակ Բարդող եռազանգ :  
 Խոկ ընդ հարաւ եւ ընդ ելս՝ Թիկունք Արաւեաց լայնանիստ  
 Նոյն կոգովիտ, եւ Դարօնք՝ ուր Փրկչին տիպք եւ հանգիստ .  
 Եւ պժգալին դաստակերտ Արշակաւան չարայուշ՝  
 Զորոյ կանգնողն ելոյծ վրէժ յարտասուելին բերդ Անյուշ :  
 Երասխայ հուսկ բամին յայպան գաւառաց շրջապատ՝  
 Բնաւիցըն պարծ գահագլուխ մայրագաւառն Այրարատ,  
 Հընոցք սիրոյ հայրենեաց եւ հաւատոց լուսոյ գանձ .  
 Ուստան Հայոց հսկայից պլսակապերճ քաջազանց .  
 Անդ Վարդգէսի հին աւան Վաղարշակերտն-Արտիմէդ՝  
 Տուն Տրդատայ՝ Գրիգորիւ լեալ Քրիստոսի իջման կէտ .  
 Գաւառք կրկին յերասխեան գետահովտէ տարագէմ՝  
 ՅԱրածանւոյ ծաղկածիր բարձունս նըստին զոյգք յեգէմ .  
 Մադկունն յելից՝ բիւրզափայլ աղբերականց խանձարուր,  
 Ուր որսաշատն արգաշուք Շահապիվան սիրամրուր .  
 Լերինք ծաղկեալք անդ եւ Դրախտք, լերինք Ոսկեայք եւ Լրսին,  
 Ուր արդ Խամուր եւ Բաղնուց՝ բերդավիճակք զոյգք լրսին .  
 Միւսն ի մըտից Երկայնեալ դաշտ ընդարձակ ու արգաւանդ՝  
 Յարտաշխեան պարմանեաց պատուեալ տօնիւք Բագրեւանդ .  
 Յորում Նըպատ բարձրանազ, Սուկաւ՝ սիրող Ալանաց,  
 Եւ դիւցազանց դրօշեալք խիտ առ խիտ բագինք աւանաց .  
 Չիրաւ ցրուող սեաւ Պարսից ի Ներսիսէ հոգէհուր,  
 Որում որդւոյն համափառ՝ անդ հուսկ հանգիստն ի Բըլուր :

Հ. Դ. Մ. Ա. Խ. Ը. Ա. Խ. Ը. Ա. Խ. Ը.

(Զմեացորդն տեսցես յամասատերին Հսկաւեմբերի .)

### ԻՄ ՎԱՆՔՍ

Դրաբեամի մը անտիպ յիշատակա-  
 գիրք :

(Տես Երես 234)

### Զ

Յայտնուեր էինք . անոնք որ ժող-  
 վուելու համար զարնող զանգակին  
 ձայնէն՝ երկայն ատեն ետենէս ինչեր  
 էին, մեր այն անտառին մէջ պահուը-  
 տած ըլլալն իմացան : Խոկ երբոր իմ  
 զլամբերտը կանչելս լսեցին, ան աւելի  
 վրանիս հասած ըլլալնուն վրայ հաս-

տատուեցան, զոր յայտնի հաճութք  
 կ'ըսէին ու կը կրկնէին : Քիչ վերջը  
 խիտ անտառին մէջ քանի մը ջահերու  
 փայլելը տեսայ, և այն լուսով տեսայ  
 որ հրացաններու եղէզներ և նիզակաց  
 սլաքներ կը շողային : Վերէն այս ամե-  
 նը կրնայի տեսնել, բայց ոչ և զմեզ  
 հալածողներուն թիւն իմանալ . սա-  
 կայն ելած ձայներու և աղաղակներու  
 շնկոցէն ինծի կ'երևար թէ քիչ չէին :

Այն վայրկենին սաստիկ տագնա-  
 պեցուցիչ անստուգութեան մը մէջ էի:  
 Կ'ուզէի մէկ կողմանէ գիտնալ թէ ինչ  
 եղաւ լամբերտ, որ կը վախնայի թէ  
 արջէն սպաննուած կամ ջախջախած  
 շրպայ . մէկալ կողմանէ կը ջանայի

կաղնւոյն ճիւղերուն և տերեսոց մէջ պահութիլ, երբ զմեզ հալածողներն կը մօտենային։ Բայց սակայն իմ անձնական ապահովութեանս խնամքէն աւելի՝ լամբերտի սէրն յաղթեց ինծի։ Թէպէտ և իմացայ որ զմեզ բռնելու համար եկող ամբոխին մէջէն աւելի սրատաներն ու վազոյները մեզմէ հեռու չէին, բայց և այնպէս՝ աւելի ցած՝ բայց որոշ ձայնով ուրիշ երկու անդամ ալ կանչեցի զլամբերտ։ Բայց միշտ նոյն խորին լուսութիւնը իմ կանչելուս կը յաջորդէր։ Գիշերուան մթութեան մէջ, և կեցած կաղնւոյս բռնն բաւական բարձր ըլլալով, չէի կրնար որոշ տեսնել ոչ արջը և ոչ լամբերտը. շիոթ և հազիւ անորոշ կերպով ծասին քովը ինկած թանձը և մութբան մը կը տեսնէի, որ ինծի կ'երեսար թէ արջն ըլլայ։ Բայց լամբերտին ոչ հետքն և ոչ ստուերը կը տեսնէի. ուստի մահաբեր ստուգութիւն մը միտքս պաշարեց թէ իյնալու ատենը վայրագ կենդանւոյն տակը մնացած ըլլայ, և անոր ահազին ծանրութենէն անշուշտ ջախջախած ըլլայ։

Դիւրին է երեակայել իմ անձկութիւնս և ցաւս. անհրաժեշտ զիս կորսուած կը սեպէի, չդիտնալով ինչ ընել՝ զիս ազատելու համար։ Կրնայի դարձեալ կաղնւոյն ուժով և երկայն ճիւղերուն պլլուիլ, և կրցածիս չափ տերեսոց մէջ ծածկուիլ, և թերես չէի յայտնուեր։ Բայց ցաւէս քար կտրածի պէս եղեր էի. ունեցած անձկութիւնս այնպէս խելքս դարձուց, որ այն վայրկենին չկրցաց այսպիսի պարզ և զիւրին ազատելու միջոցի մը ձեռք զարնել։ Անոր համար հազիւ թէ քանի մը հոգի՝ որոնց մէջ նաև զինուոր մը՝ վառած լապտերներով իմ կեցած կաղնւոյս մօտեցան, մէկէն տեսան զիս, և սպառնալեօք ու հայհոյութեամբք սկըսան բռնադատել զիս որ վար իջնեմ։ Բայց հազիւ թէ մօտ հասան, յանկարծական սարսափ մը բռնեց զիրենք, այն արջը գետինը տեսնելով. բայց շուտով իմացան որ մեռած էր, անոր հա-

մար ալ ուշ չդրին անոր, հապա խելքերնին իմ վրաս էր։

Այնչափ հայհոյութեանց և սպառնալեց չկրցայ զիմանալ. և վախով ու գողալով մէկէն վար իջայ ծառէն, և հազիւ թէ ոտքս գետինը դրի, անոնց մէ երկու հոգի բռնեցին զիս և ուժով մը կապեցին։ Լապտերաց լուսովը տեսայ արջը արեան մէջ թաթխուած, և անկէ քանի մը քայլ անդին խեղճ լամբերտը, որ կենդանութեան նշան մը չէր տար։ Իմ բարեկամս այնպէս տեսնելով, չկրցայ արտասուքս բռնել, և կը ջանայի ազատել զիս որ իրեն քով վազեմ. բայց արգիլուեցայ այն դահճներէն, որոց թիւը երթալով կը բազմանար։ Նոյն վայրկենին ծառի ճիւղերէ անշուք դագաղ մը ձեւացուցին, և խեղճ լամբերտը բոլորովին արիւնլուայ՝ գետնէն վերցնելով անոր վրայ դրին. չորս հոգի ուսերնուն վրայ առին, և զիս ալ ետենէն քշելով սկսան դէպ ՚ի գեղը երթալ։

Ճամբուն վրայ արանց և կանանց խումբերու և բազմութեան կը հանդիպէինք, որոնք երեսնուն վրայ իրենց բարկութիւնն յայտնելով՝ ետենէս եկեր էին։ Բայց իրենց բարկութիւնը մէկէն կը մարէր, երբ զլամբերտ այնպէս այլափոխած ու մեռած կը տեսնէին. շատերուն ատելութիւնն ու կատաղութիւնը՝ կարեկցովթեան կը փոխուէր, և ասիկայ կերպով մը կ'ազատէր նաև զիս, որ անտարակոյս շատերուն սոսկումն կը պատճառէի, զիս մեր թշուառ տիրոջը մահուան գործակիցներէն մէկը կարծելով։ Մանաւանդ կը լսէի որ բազմութեան մէջէն մէկը կը զուրցէր. Անկարելի կ'երեսայ որ ասանկ տղայ մը այնպիսի եղեռնաւոր ոճիր մը զործէ։ Այս խօսքերը սրտիս խորը կը վիրաւորէին, և կը սոսկայի՝ մոտածելով միայն որ զիս մարդասպան կը կարծեն։ Բայց իմ խիղճս կ'ապահովէր զիս. և հանդարտ խղճէն աւելի մեծագոյն սփոփումն չկայ, զոր կը զգայ մարդ թէ զրպարտութեան և թէ թշուառութեան առջն։

Երբոր գեղն հասանք, կրնամ ըսել որ բոլոր բնակիչն հոն կեցած մեզի կը սպասէին։ Հաղիւ մեր ետևէն հասնին ու բռնուած ըլլալն իմացուեցաւ, այն բազմութեան մէջ գովութեան և հաճութեան խուլ շնչիւն մը լսուեցաւ. և մանաւանդ թէ առջինին պէս մեզի դէմ հայհոյութիւններ արձակելու վրայ էին, մէյմ” ալ ամեն մարդ համր և լուռ մնաց, երբ այն անշուք դադաղը տեսնուեցաւ որուն վրայ խեղճ լամբերտը մեռած տարածուեր էր։

— Աստուած զինքը պատժեր է արդէն — կ'ըսէր մէկը, մինչ ուրիշ մը կը կանչէր — Մարդասպանաց կատարածն ունեցեր է։ — Ուրիշ երրորդ մը կը բողոքէր թէ պէտք էր զինքը կենդանի բռնել, և գեղին հրապարակին մէջ կախել, որ ամենուն օրինակ ըլլայ։ Մէկ կին մը, մօրս հին խնամի, առջնէս անցնելու ատեն՝ սուր և գրեթէ կատաղութենէն խղզուած ձայնով մը ըսաւ. Շատ աւելի աղէկ էր որ հօրդ հետ մեռած ըլլայիր։

Այս ձայնարկութիւններով ու բացանչութիւններով հասանք բանտը։ Զիս թաց և հոտած խուց մը մտուցին. բանտապանը պատիկ ամանով մը ջուր բերաւ, անկիւն մը տարածուած քիչ մը յարդ ցցուց, և առանց ուրիշ բան ըսելու՝ կրկին փակազակով դուռը գոցեց, զիս կատարեալ մթութեան մէջ թողլով։ Սկզբան ապուշ գարձածի պէս մնացի. ինչ որ ինծի հանդիպած էր՝ ես ինծի չէի կրնար հաւատացնել, և երազելու մը պէս կու գար։ Չեռքերս կուրծքիս վրայ զրած՝ բանտին պատին կութընեցայ, և կատարեալ անզգայութեան և անտարբերութեան վիճակի մէջ երկայն ատեն անշարժ կեցայ, իրբե թէ աշխարհքիս մէջ չըլլայի և գեռապրելս չզգայի։ Բայց կամաց կամաց ցաւագին յիշատակներ սկսան միտքս լցուիլ, և իմ տազնապեալ և խուվեալ երեակայութիւնս անցելոյն պատահարացը մէջ, և զիս այն թշուառ վիճակին հասցնող զանազան պարագայիցը մէջ կը պուրտէր։ Ա՞հ, այն զի-

շերը ինչպիսի սոսկալի գիշեր մը եղաւ ինձի համար. ինչպիսի այլայլութիւն իմ մանկական միտքս կը տագնապէր, և ինչպիսի զգացմանց յուզմունք մը իմ խեղճ սիրտս կը տատանէր։ Հաղիւ տասը տարուան՝ սեպէ որ ամբողջ կենաց մը ընթացքն ըրեր էի, և մարդ և աշխարհ իրենց բովանդակ անիրաւ չարութեամբն ու գարշելի հրապոյքներովն առջևս պարզուեր էին։ Առաջին անգամուն ես ինծի, թէպէտ շփոթերպով մը և գրեթէ առանց իմ անդրագառնալուս, այն հարցմունքը ըրի որ ամեն մարդ իր անձին կ'ուղղէ երբ երիտասարդութեանքաղցը պատրանքներն անցնելէն ետև, այրական հասակին իրականութեանն առջև կը հանդիսանայ. ի՞նչ բան է ուրեմն կեանքս, կ'ըսէի մտքէս, և ինչպիսի բան է մարդս, ուսկից այսպէս յաճախ կը վախնանք և կը զարմանանք վրան։ Անկէ ետև մարդուս և աշխարհիս վրայ շատ գէշ գաղափար մը ստացայ. բայց ուրիշ ամեն բանէ աւելի անիկայ մէկէն առջևս ներկայացաւ իրեւ տեսակ մը հրէշ, իրեւ դարանակալ և անհաշտ թշնամի մը, որուն էութիւնը և ջանքը միայն ուրիշները կործանելու և յնչելու համար է։ Բանտին միայնութիւնը, անմեղիս կրած հալածմունքը, շարութեան երեսոյթը՝ որուն ուրկէց և ինչու կատարուած ըլլալը լաւ զիտէի, բանտապանին ինծի ցուցըցած խիստ և անգութ վարմունքը, մոգիս մէջ այս տխուր տպաւորութիւններն և այս խիստ դատաստաններն կը տածէին և կ'աճեցնէին։

Երեսուն օր շարունակ այն սոսկալի բանտին մէջ փակուած մնացի։ Միայն բանտապանը կը տեսնէի, որ կտանաւորաց ողորմելի կերակուրը կը բերէր ինծի. անկէց դուրս գիշեր ու ցորեկ մինսակ էի։ Այնպիսի տխուր միայնութեան մէջ սիրուն ընկեր մը միայն ունէի. և էր պզտի ծիծառնիկ մը որ ամեն առաւօտ և իրիկուն կու գար իմ խցիս պատուհանին վրայ կը հանգչէր. որ թէպէտ բարձր էր, բայց ես կը

մագլէի և ձեռքերս ու ոտքերս աղիւ-  
սոց ագոյցներուն մէջ կը կոթընցնէի  
որ դրանդակալին վրայ՝ ինծի ուտելու  
համար տրուած ու հացէն քանի մը  
պատառ դնեմ: Սիրուն թռչնիկն այն  
պատառները կ'առնէր, և վերջը զուարթ  
գեղգեղմամբ կարծես թէ ինծի շնոր-  
հակալ ըլլալ կ'ուզէր: Առաւօտ մը  
բանտին մէջ թռաւ և գնաց հանգչելու  
այն յարդին վրայ որ ինծի անկողնոյ  
տեղ կը ծառայէր: Զզրուցուելու բան  
է այն զգացած ուրախութիւնս երբ տե-  
սայ որ ալ մինակ չեմ: գրեթէ բոլոր  
շունչս բռներ էի վախէս որ ըրյայ թէ  
խրտի ու փախչի: Քանի մը պատառ  
հաց նետեցի իրեն: ինքն ալ առաւ  
զանոնք և իր սովորական գեղգեղովն  
ողջունելով զիս՝ թռիչն արձրկեց ու պա-  
տուհանէն դուրս ելաւ: Ցաւագնեալ  
մեացի երբ տեսայ որ գնաց: Թերես,  
կ'ըսէի մորքէս, գնաց որ իրեն տուած  
կերակուրս իր պզտի ձագերուն տանի:  
Այս մոտածութիւնը զուարթացուց զիս  
և սիրտս շարժեց: Հետեւեալ առաւօտը  
սովորական ժամուն՝ երկաթի վանդա-  
կապատին վրայ կեցաւ. քիչ մը ատե-  
նէ վերջը ներս մօտաւ և նոյն տեղը կե-  
ցաւ: Իրեն ուրիշ պատառներ նետեցի.  
և նոյն հաճութեամբ ժողվնց զանոնք:  
Ոկսայ ինձմէ քիչ հեռու նետել, և ինքն  
ալ կը մօտենար և կ'առնէր զանոնք.  
միշտ հեռաւորութիւնը կը նուազեցը-  
նէի, և ծիծառնիկը միշտ աւելի կը մօ-  
տենար ինծի: Քիչ քիչ գրեթէ ոտքե-  
րուս քովն էր. ինչպիսի միխթարու-  
թիւն կը զգայի՝ այն սիրուն անսասնիկը  
ինծի այնչափ մօտ տեսնելով: Կամա-  
ցուկ կամացուկ ծռեցայ. ամեննին շր-  
շարժեցաւ. ձեռքիս վրայ պատառ մը  
երկնցուցի, ինքն ալ քիչ մը տարտա-  
մելէն ետե՝ կտուցովը յափշտակեց  
զայն: Ասանկով մեր բարեկամութիւնը  
երթալով զգալի կը յառաջէր, և ես ա-  
նոր վրայ կարգէ դուրս ուրախ էի:  
Հետս այնչափ ընտանենալն տեսնելով,  
յանդնեցայ մէկ ձեռքս երկնցընել՝ որ  
բռնեմ զինքը և փայփայեմ, բայց ինքը  
խրտեցաւ և յանկարծ դէպ 'ի պատու-

հանը թռաւ, և անկից գուրս ելաւ՝ ա-  
ռանց ինծի իր սովորական բարեր տա-  
լու: Ես մահացեալ մնացի և զինքը  
բռնել փորձելուս վրայ սաստիկ ցաւե-  
ցայ: Եւ իմ ցաւս և զղջումն հաղարա-  
պատիկ աւելցաւ երբ տեսայ որ ոչ իրի-  
կունը և ոչ հետեւեալ առաւօտը երե-  
ցաւ: Մէկէն հասկըցայ որ ծիծառնիկը  
հետս զայրացեր էր, կարծելով որ զին-  
քը գերի բռնել կ'ուզէի. և ա՛լ աւելի  
իմ անհամբերութեանս վրայ զղջացայ:  
Բայց մէյմ' ալ երեք կամ չորս օրէն  
վերջը դարձաւ. սակայն վանդակապա-  
տին վրայ կը կենար միշտ, և որչափ  
ալ ջանացի քանի մը պատառ հացով  
զինքը հրաւիրել որ ներս մտնէ, ինքը  
միշտ վերը կեցաւ: Վերջապէս առա-  
ւօտ մը իմ բանտիս անհարթ յատակին  
վրայ թռաւ, և իրեն նետած պատառ-  
ներէս յորդորուած՝ կամաց կամաց ին-  
ծի մօտ եկաւ: Ուզեցի փորձ մը ընել  
զինքը բռնելու, և այն անգամ յաջող-  
ցուցի: Սկզբան կ'ուզէր ազատիլ ձեռ-  
քէս. վերջը առանց ընդդիմութեան  
կը թողուր որ զինքը փայփայեմ և կար-  
ծես թէ ախորժ կը զգար: Զուզեցի  
շատ բռնել զինքը, վախնալով որ կը  
նեղանայ. ուստի զինքը ազատ թռ-  
զուցի:

Ամեն առաւօտ և երեկոյ իր այցե-  
լութիւնը կ'ընդունէի: Միշտ վար կու-  
գար և միշտ կը թողուր որ բռնուի:  
Ա՛լ հարկ չկար որ զինքը ամուր բըռ-  
նէի, որովհետև ալ փախչիլ չէր փընտը-  
ռեր, հապա խաղալով ձեռքէս ուսիս  
վրայ և ինչուան գլխոյս վրայ կը ցատ-  
քէր: Արդէն իսկ իրարու բարեկամ  
եղեր էինք: Իրիկուն մը ըստ սովորա-  
կանին իմ բանտս կը մտնայ և շիտակ  
ուսիս վրայ կը թռչի. զինքը ձեռքս  
կ'առնում և անհնարին զարմացմամբ  
կը տեսնեմ որ զինքն վրայ յարդի պզտի  
շիւղով մը կապած թղթի կտոր մը  
կայ: Զէի կրնար ես ինծի պարզել ինչ-  
պէս այն թուղթը վրան կը կրէր, և ոչ  
կրնայի ըմբռնել թէ ով կրնար զայն  
վրան կապած ըլլալ: Սաստիկ հետա-  
քրքրութիւն մը բռնեց զիս այն թուղ-

թը տեսնելու։ Ուշադրութեամբ զննեցի, և գարձընելով, իրիկուան արձրկած աղօտաճաճանչ լուսովը ինծի երեցաւ որ վրան բան մը գրուած ըլլայ. սակայն չէի համարձակեր փրցընել զայն։ Բայց ծիծառնիկը շարունակ գլուխը կը ցնցէր, և կարծես թէ կ'ըսէր որ այն թուղթը առնում։ Սովորականէն աւելի ուշացաւ, և որչափ ալ զինքը բոլորովին ազատ կը թողուի, ինքը զեռ երթալու կամք չէր ցուցըներ։ Չորս կողմն կը թուշտէր և մէկ ձեռքէս մէկալը կը ցատքըտէր։ Վերջապէս որոշեցի որ այն թուղթը զգէն հանեմ. և հազիւ թէ քակեցի, ծիծառնիկը մէկէն թռաւ, և մեծագոյն ուրախութեամք գեղգեղելով ելաւ զնաց։

Մէկէն թուղթը բացի. և իրաւցնէ վրան բան մը գրուած կար. բայց որովհետև բոլորովին իրիկուն ըլլալով, շատ քիչ լցոս կար, որչափ որ ջանացի որ մէջի եղածը կարդամ, չկրցայ որոշ իմաստ մը հանել. և կարդալը վաղուան թողուցի։ Բոլոր զիշերը շատ քիչ քուն եղայ. վայրկեանը մէյմը կ'արթըննայի, և այն թղթին մէջ ինչ գրած ըլլալը տեսնելու անձկութիւնս այնչափ և այնպիսի էր որ ինչուան լուսանալը ինծի հազար տարի կ'երեւար։ Ինչ և իցէ, վերջապէս առաւօտ եղաւ. մազելով ինչուան պատուհանը ելայ, և մեծ սրտագողով բացի թուղթը. և տեսայ որ կարմիր գոյնով քանի մը բառեր գրուած էին։ Բայց ինչ զարմանք և ցաւ զգացի երբոր կարդացի. « Լամբերտ մեռնելէն առաջ չենրիկին իր վերջին բարելը կը խաւրէ »։

Է

Այն խորհրդաւոր բառերը կարդալով զգացած ցաւս աւելի զիւրին է երեսկայել քան նկարագրել։ Ես զլամբերտ մեռած գիտէի, վասն զի ես անձամբ զինքը տեսեր էի այն աղիտարեր կաղնւոյն քով չնչասպառ գիտակ մը, և յանպատրաստից շինուած դադապին վրայ՝ որով որ գեղը փոխադրուեցաւ։

Մէկալ կողմանէ չէի կրնար ըմբռնել որ, անհնարին ենթադրութիւն մ' ալ ընելով թէ լամբերտ կենդանի եղած ըլլայ, ինչպէս կրնար այն տողերը գըրած ըլլալ, մինչ անտարակոյս բանտն էր և ինծմէ աւելի խստիւ պահպանուած, մահուան դատապարտուած ըլլալով։ Եւ վերջը, կ'ըսէի մողէս, ինչպէս կրնար ինքը գիտնալ որ այն թուղնիկը ինծի այցելութեան կու գայ, և անկէ աւելի՝ ինչպէս կրնար ինքը երեսկայել և ենթադրել, որ ես այս սիրուն ծիծառնիկին հետ այնչափ ընտանութիւն ունենամ, որ ինչուան կարենամ զինքը բոնել և ինծի ուղղած տոմսակը վգէն հանել։

Բոլոր այս հարցմունքներն ու խորհրդածութիւններն զիս տիսուր անըստուգութեան վիճակի մը մէջ կը ձգէին։ Այսափ վարանմանց մէջ միայն այն մտածութիւնը թէ լամբերտ գեռ կենդանի է, մասամբ մը կը մխիթարէր զիս։ Բայց այս մխիթարութիւնը մէկէն կ'անհետանար, և սաստիկ ցաւ մը կը յաջորդէր անոր, երբ այլայլեալ երեսկայութեանս առջև այն գաղափարը կու զար թէ իր կեանքը անարգ կախաղանի մը վրայ պիտի լմընցնէ։ Երբեմն ալ ինծի անանկ կ'երեւար որ այս ամենը մէկու մը ըրած դժպհի խաղն ըլլայ, զիս աւելի չարչարելու, կամ գէթ իմ թշուառութեանս մէջ զիս ծաղը ընելու համար։ Մէկալ կողմանէ չէի կրնար մէկու մը տալ ասանկ վատ կատակի մը մտածութիւնն ու գործադրութիւնը. վասն զի չէի կը ընար հասկընալ թէ ասանկ յիմարական խաղով մը ինչ նպատակի կրնար հասնիլ։

Քանի մը օր այս տագնապող անստուգութեան մէջ մնացի, որովհետև ուրիշ մարդ չէի տեսներ բայց եթէ բանտապանը, որուն չէի համարձակեր խոպը մը զրուցելու, և սովորական ծիծառնիկը, որ հաւատարմութեամբ առաւօտ ու երեկոյ ինծի այցելութեան կու զար, իր սովորական հացի պատառի բաժինը առնելու համար, զոր

խնամքով մը կը պատրաստէի : Վերջապէս առաւօտ մը բանտին պահապանը խոշոր և խիստ ձայնով մը հետո կը խօսի : Հազիւներս կը մտնէ, կ'ըսէ ինծի . — Ժամէ մը դատաւորին դիմացը պիտի տարուիս, և քու գեղեցիկ գործողութեանդ վրայօք պիտի հարցուիս . նայէ որ ճշմարիտը զուրցես, և ամեն բան խոստովանիս . վասն զի թէ որ յամառելով ստես և ուրանաս, աւելի գէշ կ'ընես քեզի քան թէ աղէկ :

Ես անտարակոյս պատրաստ էի ճըշմարտութիւնը զուրցելու, և հետեւաբար բանտապանին յանձնարարութե երկրորդ մասին մէջ գոհ չէի կրնար ընել զինքը : Ես լաւ գիտէի թէ ինչ բանի համար որ կ'ամբաստանուէի՝ բոլորովին անմեղ էի . անոր համար բացարձակ պիտի մերժէի ինչ բանի համար որ կ'ենթազրէի թէ պիտի հարցուիմ : Առաջին լսելուս որ դատաւորի մը դիմաց պիտոր երենամ՝ շատ շփոթեցայ, որովհետեւ կը վախնայի թէ ինծի սպառնալիքներ ընեն՝ իմ ենթազրեալ յանցանքս խոստովանցընելու համար : Ա՛ն, եթէ լամբւերտ հոն ինծի հետ մէկտեղ ըլլար, կ'ըսէի մէկէն, որ չափ գոհ կ'ըլլայի . կ'ազատէր զիս նեղութենէ, և ինձմէ աւելի փորձ ըլլալով, այնպէս մը բաները յառաջ կը դնէր որ ինծի վնաս մը չէր ըլլար, և ճշմարտութիւնը բովանդակ իրեն պայծառութեամբը կ'երեար :

Մինչդեռ այս խորհրդածութիւններս կ'ընէի, մէյմ՝ ալ բանտիս դուռը բացուեցաւ, և բանտապանը սեմին վրբայ կենալով՝ իր սովորական խիստ և խորունկ ձայնովն ըստ ինծի . Դատաւորը քեզի կը սպասէ : Այն հրաւէրքին՝ երկաթէ ձեռքի մը սիրտս ճնշելու պէս զգացի . բայց և այնպէս հնազանդեցայ, և տարտամ ու դողդոջուն քայլով անցայ այն զարհուրելի և աղիտաբեր սեամբը : Երկայն և ծուռումնուորահներէ անցնելով՝ խուց մը հասայ, որուն դրան քով զինուոր մը կեցածէր : Ինծի հրաման եղաւ որ կոչտ աթոռի մը վրայ նատիմ, և երբ կատա-

րեցի, պահապանը ըստ ինծի . Քիչ ատենէն կու դայ դատաւորը :

Սենեակը այնչափ մեծ չէր, և հաստցանկով ամրացած պատուհանէ մը լցոյ կ'ընդունէր : Ուրիշ բան չկար բայց եթէ կանաչ կերպասով ծածկած տախտակ մը, վրան կաղամար մը, դրիչներ և թղթի խոշոր կապոց մը : Այն տիսուր սենեկին բոլոր կահկարասկր՝ քանի մը հին աթոռներ էին : Քանի մը վայրկենէ վերջը պարոն մը կը մտնայ, հետեւ ալ ուրիշ մը : Առաջինը մէկէն ճանչցայ այն մարդն ըլլալը, որ տանտիրոջ գղեկին մէջ զիս բռնել հրամայեր էր : Ինքը դիմացս նստաւ, միւսն ալ քովս : Նախ խորունկ ու սուր կերպով մը երկայն բարակ նայեցաւ ինծի . վերջը հարցուց անունս, մականունս, տարիքս, բնակութիւնս և վիճակս . այս ամենուն բաւական համարձակ ու քաջասիրտ կերպով պատասխանեցի : Անկէ ետքը դատաւորը աւելի խիստ կերպ և աւելի ծանր ձայն մը առաւ, երկայն ազդարարութիւն մը ընելով որ ճշմարտութիւնը զուրցեմ : Արդէն, աւելցուց, արդարութիւնը ամեն բան զիտէ, որով քու ստելդ աւելորդ բան է :

Բայց թէ որ արդարութիւնը ամեն բան զիտէ, վրայ բերի մէկէն աշխուժութեամբ, ինծմէ ուրեմն ինչ կ'ուզէ զիտնալ :

Իմացայ որ դատաւորը այս իմ համարձակ պատասխանիս վրայ բռնուած մնաց : Սովորականէն աւելի ծուռ մը նայեցաւ ինծի, և զայրացած կերպով մը կանչեց . Բանը կատակի մի դարձրներ, ապա թէ ոչ կը հասկըցնեմ քեզի ինչպէս կ'ըլլայ խաղալ հետո : Ես լուցի և աչքերս վար առի, միտքս դնելով որ ուրիշ բան չըսեմ բայց եթէ լակոնական և ցամաք այս մը կամ ոչ :

Չեմ ուզեր լայնաբար մէջ բերել այն երկայն, խարդախ և նենդաւոր հարցափորձը որ ունեցայ երկու ժամէն աւելի : Ես միշտ պնդեցի թէ անմեղ եմ : Բայց ինչ զարմանկք զգացի երբ դատաւորն ըստ թէ լամբերտ ամեն բան խոստովանեցաւ : Լամբերտի

անունը լսելուս, ուրախութենէս ինչ ըլլալս չէի գիտեր : — Այս, Լամբերտ կենդանի է, բրտարար կրկնեց անի կայ, բայց քիչ ժամանակուան համար :

Այս խօպերէս՝ պարզուեցաւ ինծի այն տումակին մէջ պարունակուած դաղանիքը . այն ատեն իմացայ որ Լամբերտ կենդանի էր, և մահուան դատապարտուած պիտի ըլլայ : Փուճ տեղ ջանացի համոզել դատաւորը որ Լամբերտ ինծի պէս անմեղ էր տանտիրոջ մահուան խնդրոյն մէջ . այն դահիճը քան թէ դատաւորը միշտ կը կրկնէր թէ մեր տիրոջը մարդասպաններն մենք երկուքնիս էինք : Դու գնա, կը կանչէր մերթ ընդ մերթ, քու մատաղ հասակիդ շնորհակալ եղիր . ապա թէ ոչ քու ան անմեղ երկուցնել ուղած անօրէն գործակցիդ հետ մէկտեղ կը կախուէիր :

Տեսնելով վերջապէս որ անիրաւ տեղը զրպարտուած յանցանքին խոստովանութիւնը բերնէս չկրնար փրցընել, բանտապանը կանչել տուաւ . պատուիրեց իրեն որ զիս նորէն իմ բանտս տանի, ինծի անկողնի տեղ ծառայող յարդը վերցընէ որ մերկ գետնի վրայ պառկիմ, և մինչև 'ի նոր հրաման՝ ինծի կերակուրի համար հաց և ջուր միայն տայ : Ես ասանկ անդութ հրամանի մը չէի գիտեր ինչ պատասխան տալ . ուստի լուսութեամբ բանտապանին ետևէն դացի, և սիրտս դառն անձկութեամբ նեղուած, խոնաւ և մուլթ սենեակը դարձայ, ուսկից մէկէն վերուցին այն փշրած և հոտած յարդը՝ որուն վրայ որ կը պառկէի : Վերջը կտոր մը սե հաց և աման մը ջուր բերին . ասիկայ, ըսաւ բանտապանը, ինչուան վաղը քեզի պիտի օգտէ : Եւ աս ըսելով՝ կոնակը դարձուց, գոցեց շառայմամբ մը երկաթի գուռը, և բռնութեամբ մը փակաղակներն հրեց, իրեն թէ կարծելով որ ես փախչիլ կ'ուղէի :

Այն օրուան այլայլութիւններն զիս դրեթէ ապուշ և անզգայ ըրեր էին : Զեմ գիտեր որչափ ժամանակ հոն ներսը այն ողորմելի կերակրով անցու-

ցի . միայն թէ քիչ օր վերջը՝ այն խիստ կենաց չդիմանալով, սաստիկ հիւանդացայ : Ան ատեն անկէց վերուցին զիս և ուրիշ խուց մը տարին, և անկողին դրին, հետս ալ ուրիշ ընկեր մը : Դատաւորը եկաւ գտնելու զիս, և հարցուց թէ Ժխտելուս վրայ հաստատուն պիտի կենամ . ես՝ Այո պատասխանեցի . ինքն ալ աս լսելով, կոշտութեամբ մը կոնակը դարձուց գնաց :

Կամաց կամաց բաւական վրայ դրի : Բանտի ընկերս այնպիսի խնամք և գորով մը կը ցուցընէր, որ ինծի շատ օգտեց : Ասիկայ քառասուն տարուան մօտ մարդ մըն էր, պղտի հասակաւ, և քիչ ու անհարթ մազերով, որոնք լայն ճակտին երկու կողմէն երկնցած վար կ'իջնէին, և անկէց վար՝ երկու կրակոտ սե աչքեր կը փայլէին : Բաւական աստիճանի մարդ մը կ'երևար . բանտապանը ակնածութեամբ և կերպով մը մեծարանօք կը վարուէր հետք . և քանի որ ասոր քով դրուեցայ, ինծի հետ ալ կերպը փոխեր էր :

Այս մարդը քիչ կը խօսէր . միայն դատաւորին երթալէն վերջը եղաւ որ հետս երկայն խօսակցութիւն մը ըրաւ : Նախ հարցուց թէ ինչ էր ըրած յանցանքս . և երբ պատասխանեցի որ անմեղ եմ բոլորովին, շրթանցը վրայ հեղնական ծիծաղ մը ըրաւ, և մէկ ձեռքէս բռնելով . Հաւա, ազնիւ տըղաս, կանչեց գորովալիր ձայնով մը, քեզ տեսնեմ . ես քու դատաւորդ չեմ, և ոչ ալ դատախաղդ պիտի ըլլամ . կրնաս համարձակ ըսել ճշմարտութիւնը անանկ մարդու մը, որ աշխարհքիս և դատաստանական բաններու փորձ ըլլալով, կրնայ քեզի այդ դժպատեհ կնծիուէն աղատելու կերպը սորվեցնել :

Իմ անմեղութիւնս կրկին և կրկին ապահովցնելուս, իրաւցնէ ըսածներուս ճշմարտութեամբը համոզուիլ մը ցոցուց : Երկայն ատեն նայեցաւ ինծի, և մէկ ձեռքը գլխուս վրայ դնելով, ըսաւ . Ոչ, քու երեսդ յանցաւորի և մարդասպանի երես չէ : Կը հաւատամ քեզի, ազնիւ մանուկ, կը հաւատամ

քեզի . դու անմեղ ես , և թերեւ զոհ ես զիավուածին և կամ ամբարը շտի մը , որ իր գլուխը ազատելու համար , զքեզ կ'ուզէ կորսընցնել : Բայց ինծի ճշմարիտը ըսէ համարձակ . դու զիտես ո՞վ քու տէրդ թունաւորեց :

Այս հարցմունքը զիս բաւական նեղը ձգեց . զոր ինքն ալ իմանալով , մէկէն վրայ բերաւ . Մի վախեր որ ես ուզենամ քու վատահութեամբդ շահիլ , զքեզ կորսընցնելու համար , թէ և յանցաւոր ալ ըլլաս : Ոչ , իմ արուեստու ամբաստանողի արուեստ չէ . թերեւ ես ալ քեզի շափ զիտեմ . միայն կ'ուզեմ ամեն տարակոյսս փարատել : — Հանդերձ այսու , դեռ ես վարանեալ մնացեր էի , և չէի կրնար հաւանիլ՝ ամեն զիտցածս իրեն յայտնելու : Այն ատեն այս խորհրդաւոր մարդը աչքերը չորս կողմը դարձընելով , իբրև թէ ապահովալու համար թէ արդեօք մինակ ենք , ինծի մօտեցաւ և ձայնը ցածցընելով , ասանկ խօսեցաւ . — Մտիկ ըրէ , տղաս . ես կարծեմ որ քու տիրոջդ մարդասպանը կը ճանչնամ . ես անուն մը տամ , և քու ըսելիքդ միայն այն կամ ոչ ըլլայ : Յանձն կ'առնոււս : — Այո , պատասխանեցի , կ'առնում յանձն : — Աղէկ ուրեմն . այս մարդասպանը Պաւտիի կոմնն է : — Այս անունիս , հրախառն փայլակ մը բորբոքեց երեսս բարկութեամբ և այլայլութեամբ . աչքերս խոշոր մը բացի և քստմելով զիմացինիս վրան անկեցի : — Է՛հ ուրեմն , ինչ կը պատասխանես . այն թէ ոչ : — Այո , կրկնեցի սրտմուկան և զայրացկոտ ձայնով մը , այո , իմ թշուառ տիրոջս մարդասպանն անիկայ է , և ոչ ուրիշ մը : — Իրմէ առած պատասխանս՝ սովորական հեգնական ծիծաղն եղաւ :

Երկայն ատեն լուռ կեցաւ , և ծանր մտածութեանց մէջ ընկղմած կ'երեւար : Ես չէի համարձակեր զինքը իր մտածութիւններէն մէկդի կեցընել : ինծի համար միշտ աւելի խորհրդաւոր կ'ըլլար այս մարդը . Պաւտիի կոմսին իմ տիրոջս մահուան պատճառն ըլլալը

ինչպէս զիտէր . արդեօք կը ճանչնայ զինքը , թէ ինքն ալ այս սոսկալի չարութեան գործակից է : Այս հարցմանցս ինչ պատասխան տալ չէի գիտեր : Յանկարծ կը կենայ , ձեռքերը իրարու վրայ՝ կուրծքը դրած , վայըկեան մը կը նայի ինծի այնպէս խոր և հետազօտ աչքով մը , որ ստիպուեցայ իմիններս վար խոնարհեցնել . այնչափ զօրութիւն կ'ազդէր ինծի իր սուր և թափանցող նայուածքը : Վերջը սիրալիր՝ բայց միանգամայն ազդոյ ձայնով մը ըսաւ ինծի . — Որդեակ , ինծի մըտիկ ըրէ : Անհրաժեշտ շատ տարիներ թիւաւորութեան պիտի դատապարտուիս : — Այո , ես ալ ծանր դատակնիք մը ընդունեցայ : Բայց կ'անցնին տարիները , կանչեց տաքութեամբ մը , և բանտի մէջ ալ կ'անցնին : Պիտի իմանայ անիկա , որ այնչափ անարգութեամբ զիս հոս ներաը խոթեց : — Վերջը ինծի դառնալով հարցուց . Որդեակ , քանի տարեկան կաս : — Տասը : — Տասը՝ տասն ալ քսան կ'ընէ : Շատ աղէկ : — Ես չէի իմանար որ ինքը բոնկած ըլլայ . և հաճութեամբ մը կը կրկնէր . Տասը , տասն ալ քսան կ'ընէ . շատ աղէկ : Տասը տարին շուտով կ'անցնի : Որդեակ , զօրացիր . տասը տարիէն վերջը դու ծաղիկ հասակիդ մէջ ես , մինչդեռ ես ծերանալու մօտ կ'ըլլամ : Բայց փոյթ չէ . ես իմ խելքս և փորձառութիւնս քեզի համար կը ծառայեցնեմ , դու ալ քու բազուկդ և զօրութիւնդ ինծի համար կը գործածես : կ'ընդունիս այս փոփոխութիւնը , կը խոստանաս որ մեր հասարակաց վրէժինդրութեան սոսկալի օրը իմ առաջնորդութեանս հետեխ :

Այս սաստկութեամբ և ցասմամբ զուրցուած խօսքերուն չկրցայ բան մը պատասխանել , որոնք սրտիս մէջ խիստ սաստիկ կերպով արթնցուցին այն ատելութեան և դառնութեան զգացմունքները , զոր այնչափ ատենէ 'ի վեր կը զսպէի , և որոնք այն հրաւերըին՝ կարծես թէ առջինէն աւելի բուռն և ուժգին կերպով եռացին : Ես անտա-

բակոյս բարկութեամբ և զայրացմամբ  
բորբռած աչքերով անշարժ իրեն ե-  
րեսը նայեցայ . և ինքը իմացաւ և ըմ-  
բռնեց մէկէն որ իր առաջարկութիւն-  
ներն վրաս խոր տապաւորութիւն մը ը-  
րեր էին : — Ըսէ ինծի, կանչեց յան-  
կարծ . դու ալ թշնամի մը ունիս, և  
արդեգք սաստիկ կը ցանկան իրմէն վր-  
բէժդ առնելու : — Այս, կրկնեցի լա-  
լով . ինչպէս իմ սիրտս կը կարդաս : —  
Մի լար, որդեակ իմ, մի լար : Հան-  
գիատ կեցիր մանաւանդ . տասը տարին  
կ'անցնի, և երկուքնիս ալ լիովին մեր  
վրէժը հանած կ'ըլլանք : — Երկուքնիս  
ալ, հարցուցի մէկէն . բայց դու հետս  
ինչ ընելիք գործ ունիս : — Որչափ որ  
գու չես կարծեր : Գու թշնամիդ՝ նաև  
իմն ալ է . այն զոր ես անհրաժեշտ  
կ'ուզեմ կորմնցնել, նոյնն է ուսկից  
գու կ'ուզես վրէժ ինդրել : — Աղէկ ու-  
րեմն, ըսի . ինչ է թշնամոյդ անու-  
նը : — Դու ինքնին կրնաս ըսել զայն .  
քու հակառակորդիդ անունն է : — Կա-  
րելի բան է : — Այս, քու թշնամիդ՝  
նաև իմն է . այն որ տասը տարիէ ետև  
մեր ձեռքովը պիտի իյնայ, Պաւտիի  
կոմնն է : —

Այս լսելուս՝ ափշած մնացի : Այս  
անհասկանալի մարդը երթալով ինծի  
համար անիմանալի և խորհրդաւոր  
բան մը կը դառնար : Ի՞նչպէս կրնայ  
ասիկա, կ'ըսէի մտքէս, իմ Պաւտիի  
կոմնը մահացու կերպով ատելս գիտ-  
նալ, մինչդեռ ես բնաւ մէկու մը չեմ  
յայտնած : Բայց ովլ է ասիկայ, ուսկից  
կու գայ, ինչ կը մտածէ, և ինչու ինքն  
ալ իմ թշնամիէս կ'ուզէ վրէժ ինդրել :  
Մինչդեռ այս հարցմունքներս կ'ընէի,  
մէյմ'ալ եկեղեցւոյն զանգակին տիսուր  
և դանդաղ գանչիւնը կը լսուի : Իմ ըն-  
կերս այն ձայնը լսելուն, իր ընկղմած  
խորունկ մտածութենէն կը սթափի .  
ձեռքէս կը բռնէ, և աչքերը գրեթէ  
դուրս ելած՝ կը կանչէ . Ուրեմն, որ-  
դեակ իմ, միատեղ վրէժնիս կը հա-  
նենք : Երդուրնցիր Լամբերտին զիխոյն  
վրայ, որ հիմա դահճին տապարին  
տակ իյնալու վրայ է :

## ՍԱՐԴՔ

(Տես Երես 250)

### ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԱՐՈՒԵՍՏԱԽՈՐԾ ԵՒ ՏԱՆ ՇԽՈՒԹԻՒՆԸ

## Ա.

Հողը ամեն էակի հայրէ, ամենայնի  
ծնող : Իրմէն ծագեցաւ ամենայն մար-  
մին և հրութեամբ՝ ի նոյն դարձ կ'ընէ :  
Ամենուն սրտին մէջ լուելեայն կը խօսի  
ու հաւասարութիւնը կը զուրցէ . բայց  
և այնպէս թշնամութիւնը, հակառա-  
կութիւնը վերցընել չկրնար : Վասն զի,  
թէպէտ ամենը եղբայր և եղբայրակից  
են՝ օրէկք մը կայ դարանակալ, որ բա-  
ժանումը և ապականութիւնը՝ անհրա-  
ժեշտ պայման մը կը համարի էութեան :

Բայց և այնպէս, բարերար հաւա-  
սարակշռութեան մը վախճանաւ, ա-  
մենայն էակ՝ այս օրինաց հակառակե-  
լու համար ընդունած է ի բնութենէ  
յատուկ իմացական շառաւիդ մը : Ա-  
նով իր դարանակալաց դէմ կը զգու-  
շանայ և անձնական էութիւնը կը  
պաշտպանէ : Էակի մը կենաց պաշտպա-  
նութեան առաջին և ամենաբնական  
պայմանը՝ բնակարանի մը պարսպաց  
ապաւէնն է . տեղի անգոյլթ թշնամեաց  
արշաւանքներէ, և վայր հանգստեան  
ընդզէմ անձրեաց, հողմոց և ցրտոյ :

Այս հասարակաց բնածին հակամի-  
տութեանը կը հետևի նաև սարդը : Իր  
քրտամբք կանգնած բնակարանի մը  
որմոց մէջ ամփոփուելով, կ'անհետա-  
նայ ամեն աչաց : Թշնամին կը հասնի  
անոր սեմոց ափունքը . վեր վար կը  
դառնայ . չորս կողմը կը շրջի . մուտք  
մը կը փնտոէ . անօդուտ աշխատանք :  
Մետաքսեայ պարիսպ մը անջրպետ է  
ի մէջ հալածերցին և հալածչին :

Այսպէս մէջը ապաւինած սարդը,  
ինքինքը կը պահպանէ . այլ և միան-  
գամայն, իբր արթուն որսորդ, ուշա-